ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

ԳԻՆԸ 10 Կ. ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ 12 Կ. 1909, Շաբաթ, ՓԵՏՐՈՒԱՐԻ 14-ին. ԹԻՖԼԻՍ. №7.

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ



Лит. С. Быхова, Тифлисъ

ՌՈՒՍ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ.

Կոմպոզիցիան Բոռոզդի

— Ձերդ Մեծութիւն, ընդունիր այս նոտաները մեր տէրութիւնների կողմից և...

— Ներողութիւն, սիրելիներ, մեր գործերը Ձեր նոտաներին չեն ենթարկւում և չեն էլ կարող ածել. Մենք, մեր սեփական նոտաները ունենք.

## ԹԻՖԼԻՍԻ ՓՈՍՏԱՏՈՒՆԸ ԵՒ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ



1. Առաւօտեան ժամը ութին՝ դեռ դուռը չբացուած։
2. Արկղների մօտ։
3. Ի՞նչ պատասխան ստացան և ով և ինչպէս տուն վերադարձաւ։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, իսկ ԳՐԱՄԵՆԵԱԿԸ փակ է գիշերները.

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Ré'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՒՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ԳՐԱՄԵՆԵԱԿԸ ԳՏՆՒՈՒՄ Է

**Դվօրցօվայա փողոց, Վիկտօրիա հիւրանոցի դահլիճում.**

---

## ՂՈՍՈՒԳԱՐՄՏԻԷՆԻ ԴՈՒՄՈՒՄ ԽԱԲԱՐԲԶԱՆՆԻՐԸ

Հարանիքներում էլած կուլիք թային։

Ժամ վուր գնում ին հարսն ու փեսէն, ակրտէքն էլ նրանց ասում է՝

—«Միրեկի վուրթիք, կօսէ, էօօր, դուք փառկում իք ու էասուր էգնէն մէկմէկու ակրն իք, կօսէ. համա անհէք, վուր աշխրքիս վրէն թայիր թայիր փորցանքնիր կան, թէ հիւանդութին, թէ քասութին, թէ բաչլութին, թէ դամրլութին ու էլի շատ տեսակ նեղութիննե»...

Միր ժամգիրքը վուր գրիլ ին, էս խուսքիրը վրէն մոռացիլ ին աւելցնելու. «թէ լրբութին, թէ պրաւակատօրութին, թէ ժուլիկութին, թէ շպիօնութին, թէ պատրիօտութին ու թէ խաբրբզանութին»։

Էսօր համար խնթրում իմ միր նուր կաթղիկոսին, վուր էս խուսքիրն էլ աւելցնիլ տայ ժամգրքի մէջ։

Խաբարբզութին. ի՞նչ է խաբարբզութին։

Աստուծ վուչ գիդի էն մարթու գլուխը, վուր խաբարբզութինով ու շպիօնութինով է զուրձում։

Շպիօնութինը էն թուուր մէ բան է, վուր անում էլ չուռնէ. խաբարբզանութինը կի մարթասպանութենի զօրութին ունէ։

Իփ վուր թրիատրումը արար Օտելօն իրեն սիրող սակութար կնիկ, սիրուն Դեզդեմոնին սպանում է, չունքի օց Եագօն սուտ սուտ խաբարնիր է էլի տալիս Օտելօյին. միթոմ թէ Դեզդեմոնեն մէ ինչ վուր Կասիօյին է սիրում։ Ինչ իք գիդում սուտը ում էրեսը պիտի ասցնէ, մարթասպանի անունը ում պիտի տայ ու արժանի պատիժն էլ հիցը, ան թէ չէ մարթասպանը ո՞վ է։

Ի հարկէ վուր (դրախար իմ ասում) Օտելօյինը չէ. չունքի Օտելօն զուրթ է սպանում է, մազրած ուրիշի խուսքով է սպանում. սպանողը հուզուրումը Եագօն է։

Մաշ։

Վունց վուր օյախներում, նրնդրածերանց մէջ կան խատրնակնիր ու Եագօնիր, էնենց էլ ասկերի մէջ։

Ու վունց վուր սիրուն Դեզդեմոնեն դուշմնիր ունէր, չունքի ամ գիդի Եագօն էլ վրէն աչք ունէր, էնէնց էլ ասկերի վրէն էլ աչքիր ին ունենում։

Հասուց ասկն էլ, էն գլխեմէն էս գլուխը իրա սիրունութենի համա, մէ գլուխ թարս աչքի տակն է մնացած։

(Համա էս վուր ասում իմ, զուրթ էլ չը կարծիք, թէ զուրթ վուր սիրուն ու լաւն ինք, էս մէ բանի մէջ եանղլիշ ինք)։

Օրինակ խալխը, պատւական մարթիքը, պրավակատօրներուն, շպիօններուն ու շաթուրեսան խաբարբզաններուն շան տիղ չին դնում։

Ու էնէնց էլ պիտի ըլի, չունքի ինչ մարթ է նա, ով լիրբութինով է ապրում։

Ասի վուր հասուց ասկն էլ էն գլխեմէն էս գլուխը պրավակատօրներով ու խաբարբզաններով է պատած էլի, թէ էսսի Թուրքէթումը ու թէ Օսմանլի հուղումը։

Սուլթանը, էն Սուլթանը վուր հիմի քիչ է մնում ասի, թէ իս էլ «ցօցիալ» իմ, հայ արինը ջրի հանցի խմում էր։

Գալիցինը հայ անում վուր իմանում էր, ակռներիր կռճռեցնում, մազերը բիզ բիզ էին կաղնում։

Ինչի համա։

Էնդուր վուր ասէկօսէնիրին էին անդաձ գնում, թէ միթոմ հայիրը գուզին իրենց սակութար թագաւորութին հիմնի, ու մինձ Հայաստանի իմպերատօրութին հաստատի։

Թէ Սուլթանը, թէ Գալիցինը աշխատեցին վուր հայի անունը ՛չնչայ աշխրքի էրեսին։ Ու ինչի խաթրու. չունքի խաբարբզաններով ու լիրբադար օցերով գլխին մօղ էին էլի էնթաւուր մարթիք, վունց վուր Վաստորգով ակրտէքն էր, Վելիչկօ բէդախտուրը, Ժուլիկ Նակաշիձէն, հացաճուր Տակայշվիլին ու սրանց խրատ ասուղնիր՝ պօէմնիր, լուսահոգի Իլիա Ճաւճաւաձէն ու Աստուծ կինք տայ Ակակի Ծերեթելին։

Ու արին էր, վուր գնում էր
Հայալ սիպէրական արին։
Հայն ու թուրքիր կուեցին,
Մէկմէկու տուն քանդեցին։

Համա էս պրավակատօրնիրը ինչ շահեցին։

Հիմի Աստուծ կինք տայ միր դրախ Վարանցով-Դաշկովին, էկաւ ու տեհաւ իրա աչքով, վուր հայիրս մինձ Հայաստան կի չէ, խակի պուճուր Հայաստան էլ չինք ուզում, ու չալիշ էկաւ, յիղ տալ ուզին, ինչ վուր միզմէն անօրէնք խլիլ էին։

Վարանցովը, վուր աւելի մօդիկ է, թէ Թագաւորական Տանը, թէ սուս մինձ ասկին, բան մէ իղիօտ Մարկովը. ան պրակէրես ու անամօթ Պուրիշկևիչը, տեհաւ վուր էս սահաթիս, թէ կայ մէ օրմին, վուր Ռուսէթու ամենահաւատարիմ ին, հայիրն ին— թէ միր վարք ու բարքով, թէ գիր ու գալամով, թէ կուլտուրով ու թէ ամէն բանով։

Սուլթանն էլ տեհաւ, վուր էս սահաթիս հայիրը ուփրօ գլուխ գրած ունին Սուլթանի սահմանադրութենի, կօնցլիտուցի համա, քանց թէ իրա սակութար միլիարդերից շատերը։

Ու էս բանը ով վուր չէ տեհնում, մաշ նա համ ախմախ է, համ էլ քոռ ու խուլ Դգլրաշի Շահի հանցը։

Էսսի աւել էլ ինչ խօսինք։

Համա բանը էն է, վուր հիմի Դումի չլէնիրեմէն մէ էրկու սարսաղնիր վիր ին կացի ու հուզուրումը ուփրօ պաշտպան ին կաղնի Ռուսէթին, քանց թէ ինքը Կայսրըան Իրա Նամեսնիկը։

Ա՞յ սրան կօսին պրակէրեսութին։

Ուրիշ տիղ վուր ըլէր, ով գիդի, էս թաւուր անշնուրք պատրիօտներուն գժանոց տանէին։

Մինք կի դրանց Ղոսուգարմաէնի Դումումն ինք բազմեցրի։

Ու էսօր համա էլ էօօր դուս է գալի վուր՝ Միլիւկովը, Ռուսէթու զարթը, լիրբ է, սուս ամենից աղնիւ ու նամուսաւոր կնասնիրը ր... իր ու հայ ասկն էլ դուզէ, վուր բաժնի Ռուսէթեմէն ու մինչկլի Վարօնէժ թագաւորութին «Մանուկ Հայաստան» անէ։

Համա ինչի մինչկլի Վարօնէժ. ուփրօ լաւ չէ՞, վուր մինչկլի Պետերբուրխ, Արխանգելսկ, Վեատկա, Սիբիր, Սախալին աւէին։

Էսսի քիչ ուզարկածնիր ունինք։

Թէ վուր թագաւորութին է, մաշ մէ բաշ ուփրօ լաւ չէ՞, մինձ շատ մինձ ըլի։

Ու էս անգամէն, էս խարարրդանութիւնները տանում է մեր Ղոսուդարստվէնի Դուման։

Աստուծ գիդենայ, դուրթ իմ ասում, թէ վուր մենք, հայերս, մէ էրկու հոքի էլա էս Թասուր փիքրի ունէնայինք, խօ կու միկինայի ու կօսէի, թէ դիմա, մեր մէջ կան էնթասուրներ, վուր էս Թասուր բան են փիքր արի։

Համա Աստծու օղորմութենը էնդունէ, վուր էս Թասուր սարսաղ հայ չկայ էրգրիս էրեսին ու մեր Ղոսուդարստվէնի Դուման էլ, էս Թասուր սարսաղներից քանիսը դուգրի։

Մենք, հայերս մէ էշմիածնի վանք ունինք, չենք կանայի կաստավարի, պաչինկայ տայ, մեզ համա ասում են թէ մինչկի Վարոնէժ կօսէ, դուզին թարաքարութեն չենի։

Մէ ճեմարան ունինք 160 աշկերտներով, հարեվարքի մէջն է, էսօր էրուց ով գիդի հարեն դուս գայ, մեզ ասում են, թէ հայոց ունիվէրսիտետնիր ենք ուզում չենի կօսէ։

Ու թէ վուր չենինք, էսուր ինչ հաջաթ։ Զուրս հինգ սեմենարիա ունինք, անդալխանա ենք չենի, չունքի փուղ ու գլուխ չունինք, վուր պահենք, նրանք կի ասում են թէ հայերը էսէնց են ու էնենց"։

Մէ թիատր չունինք, վուր մեր խալխին կրթենք—սրանք մեզ ասում են, թէ թաքաւուրութենի համա հարեն կուտան կօսէ։

Էլ չիմ ասում մեր մէկէլ չկօլներու, մեր գալէթներու, մեր վաճառականներու, մեր արհեստաւորներու համա։

Լիզու չունինք, գիր չունինք, ասկյու խուսկ ու շնուրք չունինք ու նրանք կի գիտում են, թէ մենք դուրթ վուր մինձ բան ենք։

Յօսկյու շնուրք վուր ունէնայինք, մաշ Ղոսուդարստվէնի Դումէն Սաղաթելովին, Սա. Տէր.—Ալէքսէյովին, Սիրեկան Տիգրանովին, Արշակ Զուրաբովին, դոկտոր Բահաթուրովին կու ղրգէինք։

Չէ, չէինք ղրգի։

Ի՞նչի վուր՝ պատւով ասկը ուկյի մինձ մարթիք կու ծնէր, քանց թէ մենք ունինք էս սոհաթիս ծնածնիր։

Ու մաշ Ռուսէթի Ղոսուդարստվէնի Դուման, վուրդի մինչկի՞ հինգ հարիր հոքի չլէններ կան, ձլի. մէկը՝ Բոբրինսկին խմացաւ, վուր մենք էնենց ռէվօլուցիօննի ենք, վունց վուր «աղնիւ ու սիրելի Սաղաթելովը»։

Ու ամութ Ռուսէթու հարիր իցուն միլիօն խալխին, վուր մի միլիօն հայէրուցս էնենց են վախենում, վուր Պուրիշկևիչի թասուր գժիր է դրդում Դումէն։

Մարկովն էր ասում, վուր կուլի վուր Կավկազի շատաններդ հիմեն կօսէ. լեզգին, հայը, վրացին, թուրքը թաթին, եզդին, քուրթը, օսը, խէվսուրը, ուտիացին, աջարը, դըգիրը, թուրքմէնը, սվանը, մէգրէլը, իմէրելը, ըէր ձենը.

Հը վա՞նց էր հաւնում, կուլի չէ՞ շատաններ։ Կուլի մա՞շ կուլի. թէկի մեր Ղոսուդարստվէնի Դուման, Մարկովի թասուր խղիատներ, Պուրիշկևիչի թասուր լոփիր կուլին, բաս օսիցն ու եզդիցը, քուրթիցն ու դըրգիգիցը շատաններ չի ըլէ՞։

(Էլի կուլի)

Խասպար Կալաստուղեանց

## ՀԱՅ ԳՐՈՂԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Ի տրխուր աշխատանքիդ,
Դեռ թուք ու մուր վաստակեցիր.
Եւ անման փառք վերջը կեանքիդ
Ազգից թաղում դադեցիր։

## ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱՆԵՐԸ

Ես շատ միամիտ մարդ եմ, այնքան միամիտ, որ մի քանի օր սրանից առաջ վճռել էի թերթ հրատարակել, այն էլ ամենաթունդ «սոցիալիստական» ուղղութեամբ...

Քանի որ երբէք թերթ չեմ հրատարակել, ոչ էլ այդ գործին ծանօթ եմ, ուստի ինձ շատ հեշտ էր թւում ամէն բան. այս ինչ հարուստ կայ (?!) 1000 րուբլի. մնում է ուրեմն աշխատակիցների հոգսը քաշել...

Աշխատակիցներիս ցուցակը կազմելով և որոշելով, թէ ում ինչ մասն եմ յանձնելու, ես դիմեցի նախ և առաջ Ճարպիկեանին։

Ճարպիկեանը փաստաբան է և ես շատ լաւ յիշում եմ նրա կրակոտ ճառերը այն «կարմիր» օրերին... Սրան պէտք է յանձնէի առաջնորդողները...

Ահա և Ճարպիկեանի սեփական տունը. նա նոր էր ամուսնացել 30000-անոց աղջկայ հետ և տունն էլ վրան էր ստացել։

Վախվախելով զանգահարում եմ. դուռը բացւում է և ես բարձրանում եմ շքեղ սանդուխներով, աղախնի կասկածոտ հայացքների ուղեկցութեամբ, (երևի կարծում էր էքսպրօպրիատօր եմ)։

Դահլիճը զարդարուած էր ամենանուրբ կահկարասիով, գեղեցիկ պատկերներով և բոյսերով...

Մի քանի րոպէից յետոյ, ներս մտաւ Ճարպիկեանը.

—Ա՜ա, բարև. չէք երևում. հ՞ը, ինչ կայ։

Վերջին խօսքերը նա այնպիսի տօնով արտասանեց, կարծես ուզում էր ասել. գէ շուտ արա, գործդ ասա, ժամանակ չունեմ։

Չորս կողմի շքեղութիւնից ճնշւած՝ ես մէկ վճռեցի մաքիցս հանել իմ տարօրինակ առաջարկութիւնը և ասել թէ կնոջիցս ուզում եմ բաժանւել և եկել եմ խորհուրդ հարցնելու, բայց տեսնելով, որ այս էլ անյարմար է, մի կերպ հասկացրի իմ նպատակը...

Լսելով որ թերթ եմ ուզում հրատարակել, Ճարպիկեանը զարմացած, ծիծաղկոտ դէմքով նայեց վրաս, կարծելով թէ հանաք եմ անում, բայց համոզւելով որ լուրջ եմ ասում, պատասխանեց դառը.

—Գիտէք, ես շատ համակրում եմ և գաղափարը և ծրագրները, բայց... ներկայ մոմենտը ուրիշ պահանջներ ունի... այժմ այնպիսի ժամանակ է, որ պէտք է սպասել...

—Մինչև Երբ, հարցրի ես.

—Մինչև որ ժամանակը կը փոխւի։

Այլևս չերկարացրի խօսք. հրաժեշտ տալով դուրս եկայ, գոհ մնալով նրա պատասխանից։

Եւ իսկապէս. այն ժամանակ նա աղքատ էր, դեռ չէր ամուսնացել, և շանթ ու կայծակ էր թափում բուրժուաների ու բիւրոկրատիայի վրայ, շտապում էր շուտով ամէն ինչ կործանել... իսկ այժմ, այս հիանալի տանը, փափուկ, տաք ու կոկիկ պայմաններում, ի հարկէ կարելի էր սպասել և անվերջ սպասել...

Այստեղից պէտք է գնայի Սանչոյեանի մօտ. սա էլ այն ժամանակ շատ «թունդերից» էր. ժողով չէր լինում, որ ներկայ չլինէր, մարդ չկար, որի հետ ծանօթ չը լինէր...

Քրոնիկոնը, մանր լուրերի բաժինը սրան պէտք է յանձնէի։

Տանը հարցնելով իմացայ, որ պ. Սանչոյեանը... խանութ է բացել...

Զարմանքս մեծ էր, բայց և այնպէս գնացի խանութ։

Նա նստած քննում էր հաշիւները, ինձ տեսնելով, քաղցր ժպիտով բարևեց և կարծես սպասում էր, թէ մի բան պէտք է առնեմ։

—Նստեցէք խնդրեմ.

Ես նստեցի. գլխիցս արդէն դուրս թռաւ իմ ծրագիրը և վճռեցի մի ուրիշ պատճառ հնարել...

—Ի՞նչ կայ, ինչ չկայ, հարցրի ես։

—Է՜հ. քեաստութիւն է, առևտուր չկայ. մի գործակատար ունեմ, ահագին ռոճիկ է տանում. պէտք է արձակեմ և դրա կէս ռոճիկով մի ուրիշին վարձեմ. գիտէք շատ են երես առել. պէտք է սանձահարել..

Ես յիշեցի «այն ժամանակը», երբ Սանչոյեանը տաք տաք վիճում էր և այնպէս ջերմ պաշտպանում «աշխատաւորների» բոլոր, բոլոր պահանջները, մինչև իսկ նրանց ուզածից աւել էր պահանջում...

—Շիրքախատի ձէթ ունէ՞ք, հարցրի ես.

—Ինչպէս չէ. ամենալաւիցը.

—Վաղը կը գամ կը առնեմ. միայն խնդրում եմ լաւիցը առէք.

—Անպատճառ։

Դուրս գնացի. աւելորդ էր նրան յայտնել իմ ծրագիրը։

Փողոց դուրս գալով, ես նկատեցի հեռուից Մոլորակեանին, որը նոյնպէս իմ ցուցակումն էր.

Նա կուչ եկած, կարծես վախվախելով քայլում էր...

Ուզում էի մօտենալ նրան և յայտնել իմ

ծրագիրը, բայց նա իսկոյն անյայտացաւ...

Ես արդէն յուսահատուել էի, ինչ անեմ, գնամ արդեօք Յարմարեանի մօտ. Էհ գնամ

Ու գնացի։

Յարմարեանը... Կարո՞ղ եմ մոռանալ. «այն տարինե» նոր էր վերադարձել արտասահմանից. կարմիր թաշկինակը վզին՝ նա բորբոքւում էր և բորբոքում ուրիշներին իր ճառերով։

Այժմ նա ուսուցիչ էր պետական դպրոցում և ապրում էր մի կոկիկ տան մէջ, քաղաքի լաւ մասում։

Կատւի քնքշութեամբ նա ձեռքս բռնեց և ներս տարաւ։

Աղախնին պատուիրելով, որ թէյ բերի ինձ համար, նա նստեց ու սկսեց հարց ու փորձ անել։

Ես յայտնեցի նրան գնալուս նպատակը։

Յարմարեանը ժպտաց։

—Երանի ձեզ, դարդ չունէք, ասաց նա. դեռ խելքի չէք եկել։ Չէ՞, հանաք էք անում. լրագիր էք ուզում, տյ ձեզ «Նօվօե Վրեմիա», կարդացէք, ես երեք ամիս է կարդում եմ, շատ հետաքրքիր է։

Այս ասելով նա սեղանի վրայից վերցրեց լրագիրը և ինձ տուեց։

—Աիր դուք առաջ... այն տարին ուրիշ բանէր էիք ասում...

Հը՜մ... այն տարին. գիտէք, երեկ գիշեր մի սարսափելի երազ տեսայ.

—Երևի ձեզ կախում էին։

—Ոչ։

—Կամ գուցէ գնդակահար էին անում.

—Ոչ. աւելի սարսափելի բան. ինձ ստիպում էին, որ ես հաւակնում և բացատրեմ այն ճառերը, որ ասել եմ «այն տարինե»...

Ծիծաղս եկաւ...

—Հիմայ դուք ուզում էք, որ ձեռս առնեմ մի խելքի լինեմ. մարդ պէտք է յեղափոխական լինի 1905, 1906 տարիներին, աշխատի ամենից բարձր և ամենից շատ ճառել... իսկ այժմ... նա պէտք է զբաղւի տուս ու փուս բաներով. իր չաղ պաշտօնով, կանանցով, պատիկ քէֆերով... մի խօսքով պէտք է ինքն իրեն «զբաղի». ձեզ էլ եմ ասում. իմ դասին հետեւեցէք. էդ բաները գլխներիցդ հանեցէք։

Ես խորապէս ազդուեցի նրա խրատներից. թերթ հրատարակելու միտքը, այնպէս անյայտացաւ մտքիցս, կարծես իսկի չկար։ Երբ դուրս եկայ փողոց, մտածեցի... իսկապէս ձեռս առնու մի խելքի լինելը. շատ անյարմար է, ձեռքը մարդ կը մրսի, ամառը կը շոգի. Յարմարեանը լաւ էր ասում։

Այսպէս խրատներով կշտացած՝ գնացի տուն...

Մնաս բարեաւ իմ լրագիր...

Ձէնով Օհան

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ազգագրական ընկերութ. պարահանդէսը շքեղ ձևով զարդարուած ու լուսաւորուած մեծ բազմութիւն էր հաւաքել ընկերութեան օգտին տրւող երեկոյթին։ Ծրագիրը խիստ լաւ էր կազմած, ամենքը գոհ և ուրախ սրտով հեռացան։

Մ ո ւ տ ք եղաւ տոմսակների վաճառումից 840 րուբլի, ծաղիկներից 46 ր., «Փշտի մշտից» 105 ր., շամպանեայից 70 ր., նուէրներ 7 ր., 45 կոպ.

Ընդամենը 1067 ր. 45 կոպ.

Ծ ա խ ք Վարձ դահլիճների 250 ր., լուսաւորութեան 180 ր., զարդարանքների 430 ր., ծաղիկների 57 ր., շամպանեայի 25 ր., աֆիշների 22 ր. յայտարարութիւնների 38 ր., ծառաներին 30 ր., մուզիկ 40 ր.,

Զուտ վնաս 4 ր. 55 կոպ.

Բացի չարչարանքից։

Վարչութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը երեկոյթին մասնակցող բոլոր անձանց, այլև յաճախող հասարակութեան, իրենց արած առատ նուիրաբերութեան համար։

# ՃԱՐԹԻԼ-ՃԱՐԱԹ

VI

Գիւմրի՞—Ալեքսանդրապոլ

Ոչ մի քաղաքի այնպէս չէ սազում Գիւմրի անունը, որքան Ալեքսանդրապոլին։

Եւ երբ ես ասում եմ Գիւմրի, իմ առաջ կանգնում է մի ամբողջական պատկեր։

Ահա ձեզ մի հայկական քաղաք. կամ, ճիշտն ասած, մի «իսկական հայ» գիւղ. մեծ գիւղ, աղքատ, խեղճ, ողորմելի գիւղ, որը չգիտեմ ինչ պատմական, թէ բիւրոկրատական թիւրիմացութեամբ անուանել է Ա լ ե ք ս ա ն դ ր ա պ օ լ։

Ինչո՞ւ, ինչ իրաւունքով—սատանան գիտէ, թէ ինչ քամի է փչել և որտեղից, որ մեր իսկական հայ Գիւմրին, մի գեղեցիկ օր դարձել է Ալեքսանդրապօլ. այսինքն մի այնպիսի բան, որին մինչև օրս չեն հաւատում հէնց իրենք գիւմրեցիք։

Ճիշտ է Գիւմրում երբեմն կարելի է պատահել և ալեքսանդրապօլցիներին, բայց... դրանց թիւը այնքան քիչ է, որ հէնց որ մի գիւմրեցի տեսնում է, որ ինքը կամաց կամաց ալեքսանդրապօլցի է դառնում, իսկոյն մտածում է որ առաջ թողնել Գիւմրին և ուրիշ քաղաք գնալ... և թողնելով Գիւմրին, վերաբնակուելով նոր քաղաքում, այս անգամ արդէն իրաւունք է համարում իրեն կոչել ալեքսանդրապօլցի, բայց երբէք գիւմրեցի։

Բայց որպէսզի ոչ մի թիւրիմացութիւն առաջ չգայ, ես ցանկանում եմ նկարել ձեր առաջ գիւմրեցուն և ալեքսանդրապօլցուն։

Գիւմրեցին հագնում է սև չուխ, փոքր ինչ գոյնը գցած չուխայ.

Ալեքսանդրապօլցին՝ հնամաշ սիւրտուկ։

Գիւմրեցին ունի լայն, շատ լայն, տոլագները կարած շալւար։

Ալեքսանդրապօլցին՝ էժանագին բրիւկ—3—4 րուբլիանոց։

Գիւմրեցին առաջևը կապում է սպիտակ գոգնոց, որը միշտ կեղտոտ է լինում։

Ալեքսանդրապօլցին հագնում է սպիտակ վարտանիկ, բայց այնքան աղտոտած, ճըմռուած որ աւելի շուտ կապտի է նման, քան օսլայած վզնոցի։

Գիւմրեցին խօսում է բարձր, կոպիտ և կարծես ամէն խօսք ասելիս հասկացնում է քեզ, որ նա կարող է քեզ ապտակել և կողքերդ ջարդել։

Ալեքսանդրապօլցին—սա էլ է կոպիտ ու բարձր խօսում, բայց չգիտեմ ինչու, ապտակելուց վախենում է։

Գիւմրեցին իրենց քաղաքային այգու մասին ասում է երթանք «սադը»։

Ալեքսանդրապօլցին ասում է «երթանք այգին»։

Գիւմրեցին սիրում է լաւը բացելուն պէս, հէնց բումկայ «բախի» թարլիել։

Ալեքսանդրապօլցին խմում է ժամը 9-ին և այն հազիւ երեք բումկայ։

Գիւմրեցին սիրում է իր չորս եկեղեցիները և գնում է այնտեղ հայհոյելու։

Ալեքսանդրապօլցին միայն եկեղեցու չորս կողմն է ման գալիս և դարձեալ հայհոյում է, բայց ցածրաձայն։

Գիւմրեցին ուտում է օրական մօտ տաս հաւկիթ և այն էլ շատ պինդ։

Ալեքսանդրապօլցին հաւկիթից խույս է տալիս և սիրում է էժան կաթ։

Գիւմրեցու իդէալն օձառուն պահելն է, որ կարողանայ, ամեն մանող դուրս եկողի հետ, բռնի թաթլել։

Ալեքսանդրապօլցու իդէալը գլանի դառնալն է, այնտեղ քնելու համար։

Գիւմրեցին սիրում է Սուրբ Փրկչի զանգը։

Ալեքսանդրապօլցին՝ ռուսական զանգը։

Գիւմրեցին թատրոն, ցիրկ, կոնցերտ տեսնելու համար՝ երբէք փող չի վճարում, այլ բռունցք ցոյց տալով ներս է մտնում ու զանազան բացականչութիւններ անում։

Ալեքսանդրապօլցին էլ է սիրում թատրոն, ցիրկ, կոնցերտ. միայն գիւմրեցու նման՝ սա էլ փող տալ ներս մտնելու հետ գլուխ չունի, այլ դիմադրում է տոմսակ ծախել, կարգադրիչ դառնալ, դերասանների

ეროვნული ბიბლიოთეკა

հետ բարեկամանալ և... դարձեալ անմտացնելու մտնել։

Գիժմրեցին սիրում է այն քաղաքացիներին, որ իրեն հայհոյում, ծեծում, քաշում է կոխում։

Ալեքսանդրապոլցին սիրում է այն քաղաքացիներին, որի մասին կարելի ամեն տեղ վատը խօսել, ուստի և գաղտնի յօդվածներ է գրում թերթերում, անունը կեղծած։

Գիժմրեցին անզգածութեան սիրահար է։

Ալեքսանդրապոլցին՝ կայարանի եկող գնացող գնացքներին։

Մի խօսքով, բոլորովին տարբեր մարդիկ են գիժմրեցին ու ալեքսանդրապոլցին և եթէ այդ երկուսի մէջ կայ մի ընդհանուր բան, այդ այն է—որ թէ գիժմրեցին և թէ ալեքսանդրապոլցին-երկուսն էլ հաւասար չափով աղքատ են։

Ուստի այն քաղաքացուհին, այն՝ ձայնաւորները, որոնք մի օր Գիժմրին կը հարստացնեն, թող նրանք հաւատացած լինեն, որ այդ օրից Գիժմրում չի մնայ և ոչ մի հատ ալեքսանդրապոլցի. այլ բոլոր գիժմրեցիները ալեքսանդրապոլցի դարձած, հենց միւս օրը կը գնան կայարան և այդտեղից հայրդ ուրիշ քաղաք... որպէսզի այնտեղ իրասնդը անենան մնալ և կոչուել իսկական ալեքսանդրապոլցի...

Ուրեմն արժէ արդեօք Գիժմրին հարստացնել-Ալեքսանդրապոլ շինել։

Եթէ ինձ կը հարցնէք-կասեմ՝ ոչ։

Որքան շատ գիժմրեցին գիժմրեցի մնայ՝ լաւ Գիժմրու համար և

Նոյնքան լաւ ալեքսանդրապոլցու համար։

Սօտակէ

## ՓՈՔՐԻԿ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբէք ափսոսալի չէ իմանալ ճշմարտութիւնը. սուտն է միայն զզւելի։

—

Կեանքը պէտք է լինի և կարող է լինել անընդհատ ուրախութիւն։

—

Արդարութեան մի ժամն աւելի արժէ, քան եօթանասուն տարւայ աղօթքը։

—

Եթէ գեղհատիկը դառն չլինէր, նրան չէին ոսկեզօծի։

—

Ամենաանյաղթելի ոյժն աշխարհում համբերութիւնն է. համբերութիւնը յաղթում է ամեն բանի։

—

Անհաւատ մարդու կեանքը—անասունի կեանք է. սակայն անհաւատութիւնը—հաւան չէ։

—

Իսկական իմաստուն մարդը միշտ ուրախ է։

—

Յիշիր, որ դու չես ապրում աշխարհում, այլ անցնում ես նրա միջով։

—

Զարութեանը պատասխանիր բարութեամբ, և դու կը ոչնչացնես չար մարդու մէջ այն բաւականութիւնը, որ նա ստանում է չարութիւնից։

## Ն Ւ Է Ր

Սամարայից պ. Իվան Տէր-Մանուէլեանը մի օրինակ 1909 թւի «Խաթաբալա» նւիրել է Զիբրայիլի գաւառի Խանծաձոր գիւղի երկսեռ դպրոցին։

## Ք Ր Ո Ն Ի Կ Ո Ն

Կիրակի, բարեկենդանի գիշերը, Տափի թաղում ապրող Մելքոն Մարտիրոսեանի տանն են մտել գողերը և ոչինչ չեն գտել։ Ոստիկանութիւնը հետամուտ է լինում գողերին և երեք հոգու կալանաւորում Սալդատսկի բազարում, երբ սրանք քաղցածութիւնից խարշելիկի խանութի առաջ կանգնած կերակուրների հոտով էին իրենց քաղցը յագեցնում։

—

Վանքի ուսաղ տաճարում, կիրակի օրը ժամասացութիւն կար։ Առաջնորդը նոյնիսկ եկեղեցի էր իջել։

—

Տրամվայն հանդիպեց դիմացից եկող տրամվայի վագոնին և երկուսն էլ կանգնեցին գծի ուղիղ մէջ տեղը։

Քաղաքային վարչութիւնը խիստ բողոք բարձրացրեց այդ առթիւ։

## ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Հետևեալ «ցաղանդների» մասին.

—

Շուշի.—Բարեկենդանը ուրախ անցաւ, սիրողները խաղացին «Էս էլ քի մոցիքլութին», օր. Անանեանը մեծ շնորք ցոյց տւեց, երևի նա տաղանդ ունի, հարկաւոր է անշէջ կայծը կատարելագործել։

# Ֆ Ե Լ Ի Է Տ Օ Ն

## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԷՍ ՄԻ ԲԱՆ

—

Այսօր բարեկամս մի գիրք էր ուղարկել ինձ, խնդրելով, որ մի ռեցենզիա գրեմ դրա մասին, այն էլ յատկապէս մեր սիրած թերթին—«Խաթաբալային» ուղարկելու համար։ Սակայն նա լաւ իմանալով, որ ինձ համար բոլորովին անհնարին էր այդ 58 երեսանոց գիրքը սկզբից մինչև վերջը կարդալ, ուստի ինձ օգնութեան գալու և իմ գործս հեշտացնելու համար, նա մատիտով գծել էր այն տեղերը, որոնց վրայ ուզեցել էր դարձնել իմ գլխաւոր ուշադրութիւնը։

Գրքի երեսին տպած էր, Ա. Ջանեան.

*Կեանքի գարունքին.* Весна жизни А. Джаняна. Բագու, տպարան «Տրուդ». Баку. типогр. «Трудъ» 1908.

Ներողութիւն խնդրելով նրա հեղինակից՝ բանաստեղծ պ. Ա. Ջանեանից, որ ես չը հասկացայ նրա պօէմայի միտքը, որովհետև անհնարին է դա կարդալ սկզբից մինչև վերջը, ես կը բերեմ մի քանի կտորներ այն տեղերից որ ընդգծել էր իմ բարեկամըս։

Սակայն դրանից առաջ թոյլ տւէք յիշել մի փոքրիկ պատմութիւն, որ մտքումս իսկոյն վերարտադրւեց, երբ ես կարդացի այդ տողերը։

Դեռ ուսումնարանի նստարանից ես ունէի մի ընկեր, որի հետ մանաւանդ վերջին տարիներս բաւական մտերմացայ, որովհետև նա էլ ինձ նման, սիրում էր պարապ ժամանակը ոտանաւորներ թխել և մի առանձին ոգևորութեամբ անգիր ասել ինձ մօտ, երբ մենք պատահում էինք միմիանց։ Դրանք շատ լաւ էին դուրս գալիս և ես միշտ խորհուրդ էի տալիս տպել առանձին գրքոյկով, սակայն վաղաժամ մահը արգելք եղաւ նրա այդ նպատակի իրագործելուն։ Երկու տարի առաջ ես դժբաղդութիւն ունեցայ գերեզման դնել այդ վաղաթառամ դժբաղդ ընկերիս։

Սակայն այսօր, ես կրկին յիշեցի նրան ոչ թէ նրա այն գողարիկ ոտանաւորների համար, այլ մի ուրիշ բանի։ Ամեն անգամ երբ մեր զրոյցը կը վերջանար, նա կամաց կամաց ծոցի գրպանից դուրս կը քաշէր մի հին փոքրիկ յիշատակարան և այնտեղից կը կարդար «աֆօրիզմներ», որ նա ժողովել էր իր առանձնական կեանքի ընթացքում։ Բայց հետաքրքիրն այն էր, որ այդ բոլորը միայն նուիրւած էին մի բանի, այսպէս ասած, միայն մի բանի շուրջըն էին պտտւում և այդ երջանիկ էակը այն չորքոտանին էր, որին հեծաւ մեր Տէր Յիսուսը. դրան տգէտ ամբոխը սովորաբար անւանում է [illegible], իսկ վիպասանները ու բանաստեղծները՝ էշ։ Եւ այսպէս ընկերս ժամերով կը կարդար իր ժողոված հարիւրաւոր առածները ու աֆօրիզմները, որոնք ամեն գոյներով նկարագրում ու գովաբանում էին իշին։

Ուստի հէնց որ կուզէինք մի քիչ հանգստանալ լուրջ փիլիսոփայութիւններից, կը խնդրէի նրան.—«ընկեր ջան, խնդրեմ հիմայ էլ կարդաս մի քանի հատ քո իշային աֆօրիզմներից» և նա իսկոյն ժպտալով դուրս կը քաշէր իր ծոցից յի-

Ալեքսանդրապոլ.—Ի պատիւ Վարդանանց տօնի, խաղացին «Ասլան Բալասի»։

Սիրողներից տաղանդաւոր էր օր. Ծիծիկեանը, խորհուրդ կը տանք օրիորդին անտարբեր չմնալ դէպի Աստուածային գանձը։

Լագոդեխ.—Բարեկենդանին մենք էլ ուզեցանք զւարճանալ, բայց անակնկալ խոչընդոտներ առաջացան, թէև ներկայացումը չյաջողւեց, բայց օրիորդ Մեծմազեանը խիստ շնորհալի ընդունակութիւն ունի, վատ չէ և տիկ. Մանուկեանը որ եթէ իր վրայ լուրջ ուշադրութիւն դարձնէ, կարող է ապագայում մայրենի բեմի զարդ լինել։

Երեւան.—Թեմական դպրոցում իպատիւ Վարդանանց հանդէս կարգեցին, պարեցին և խիստ զւարճացան, աշակերտ Անշնորքեանը շնորհալի ձայն ունի. եթէ ձայնը մշակէ, բանպայման կարող է պիտանի լինել։

Սամարկանդ.—Վարդանանց տօնի օրը, տեղիս սիրողները բարեհաճ մասնակցութեամբ աշխարհագրական, կայսերական, արքունական, իշխանական և այլ ընկերութեան ներկայացուցիչ պ. Բարսեղեանի յօգուտ Թուրքահայերի ներկայացում և կոնցերտ սարքեցին, որը հաճելի տպաւորութիւն թողեց. հասարակութիւնը ծայր է ի ծայր լցրել էր սրահը։ Պ. Բարսեղեանը ցոյց տուեց իր անզուգական ընդունակութիւնները։ Նա կարող է օգտակար ույժ լինել։ Զուտ արդիւնք 3 ր. 47 կ. փոխադրւեց Տաճկաստան կարօտեալներին բաժանելու։

## ԱՌԱԿՆԵՐԻ ԳՐՔԻՑ

Նապաստակը փախչում էր։
Նա փախչում էր լեղապատառ։

—Ո՞ւր ես փախչում այդպէս հոգիդ բերանդ, և ինչո՞ւ,—հարցրեց գիտողը նրան։

—Լսել չե՞ս. Շահն հրամայել է բռնել ու նալել ուղտերին։

—Է՛, դու խո ուղտ չես։

—Բան ասացիր. գետ կը բռնեն կը նալեն, յետոյ գնա հաստատիր, թէ դու ուղտ չես, նապաստակ ես։

Մ. Ա.

## ԽՄԲԱԳՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

—Շնորհակալ եմ պարոն խմբագիր, յօդուածս տպել էիք...

—Չարժէ, չարժէ սիրելիս. ինչպէս երեւում է, դուք տաղանդ ունիք. գրեցէք, գրեցէք բալամ, ես ուրախութեամբ տեղ կը տամ ձեր գրւածներին, միայն ես ձեզ խորհուրդ եմ տալիս կարդալ, անընդհատ կարդալ...

—Շնորհակալ եմ ձեր բարի խորհրդի համար, պարոն խմբագիր, բայց... բայց, պարոն խմբագիր, ձեզ քաջ յայտնի է, որ ամեն մի աշխատանք պէտք է գնահատւի, ասաի պարոն խմբագիր, խնդրում եմ այսուհետև իմ աշխատութեան համար մի չնչին վարձատրութիւն, որով դուք ինձ, թէ նիւթականով օգնած կը լինէք և որ ամենագլխաւորն է, դուք ինձ գրանով խրախուսած կը լինէք դէպի գործ, իսկ ես այդ բանից քաջալերւած աւելի եմ կաշխատեմ։

—Դրա դէմ ես ոչինչ չունեմ, բայց ես ձեզ շատ եմ ափսոսում, գիտէք, դուք տաղանդ այն էլ նիհար ու հիւանդոտ էք երեւում և ես կարծում եմ, որ եթէ դուք շատ կարդաք և գրէք, կարող էք թոքախտ ստանալ, չկարծէք, թէ ես վարձատրութեան համար եմ ասում, օ,ո՛չ, ես ձեզ խորհուրդ եմ տալիս ոչինչ չգրել, ոչինչ չը գրել...

—Պարոն խմբագիր, մի բարէ, սպասեցէք, դուք անհոգ եղէք, ես, ես չեմ հիւանդանալ...

—Ը՜ր... ո՛չ, ոչ, ես ձեզ խորհուրդ չեմ տալ գրել, ներեցէք խնդրեմ, ես աշխատում եմ, փոստ եմ գնում, չգրէք, ոչինչ չգրէք, խորհուրդ եմ տալիս, չգրէք, ցտեսութիւն, ոչինչ չգրէք...

Օշխար

* * *

Զուխտ յարկանի տուն ունի,
Արաղի դուքան ունի.
Աջ ու ձախին կծում է,
Գիւղի մէջ անուն ունի...

Գեղի աղբիւրը դուռն ա.
Ամեն օր տանը զուռնա...
Քէֆ ուզածին խաբում է,
Սաղ գեղն էնոր բուռն ա։

Շ.-Ա.

շատակերանը և կը կարդար՝
«Էշը դաղի, ձին ուտի»,
«Էշը մատաղ չի լինի, իշագինը հօ կը լինի»։
«Էշն ինչ գիտի, նուշն ինչ է։
«Էշը կերան, պոչումը խռովեցին»
«Էշ կերել ա, էշ մեծացել.
«Էշը որ մի տեղ ցեխն ընկաւ, էլ դէնը չի անցնիլ» և այլն և այլն։

Եւ այսպէս նա կը շարունակէր անվերջ, մինչև երկուսով էլ կը յոգնեինք—նա կարդալուց, ես լսելուց։

Ահա թէ ինչու, աչքի անցնելով պ. Ա. Ջանեանի պօէմն և այդ պօէմայի հերոսի՝ էշի անթիւ զվարճութիւնները, խիստ միանմանութիւն գտայ, այս նորեկ բանաստեղծի, եթէ կարելի է այսպէս ասել՝ իշային ստանաւորների և վաղամեռիկ ընկերիս իշային աֆորիզմների մէջ։

Սակայն յառաջաբանս շատ երկարեցաւ. բերենք մի քանի հատւածներ այդ իշային պօէմայից և թող հարցը «լինենայ», ինչպէս ասում են մեր հանհոս եղբայրները։

15 եր. «Թէ ջրի ճամբին էշերը մալի
«Խինջ էին արել ու տալ փախի
«Տղի առաջից ծուել բաղերը
«Ու կրծել այսպէս մատաղ տունկերը».

16 եր. «Ինչպէս մեծ պապին թողած էշերը.
«Որ երբ կրծում են մատաղ տունկերը
«Չեն էլ հարցնում թէ ով է տնկել
«Մի բանի համար էսպէս մեծացրել»։
. . . . . . . . . . . .
«Որ տղի առջից պատահմամբ մի էշ
«Գալիս է կրծում և այլն և այլն։

Այս տողերից կարելի է եզրակացնել, որ բանաստեղծ պ. Ա. Ջանեանը կամ այգետէր է և կամ, ներողութիւն համարձակութեանս բաղմանչի, որի մատաղ տունկերը կրծել են մոլի էշերը...

18 եր. «Եւ էշն անթաժան առաջս արած,
«Մի երկար ձող էլ ուսումս դրած՝
«Գալիս էի քաշ դէպի կալերը։

Չէ, այստեղ ուրիշ բան է պարզւում. երեւում է որ Պարնասի ընտրեալ պ. Ա. Ջանեանը մինչև անգամ... էշակշի է եղել։

24 եր. «Ու մտածելով վեր էի գալիս
«Կարծում է թէ էշն էլ է լալիս.

Ի հարկէ, պ. Ջանեան, ով չի լաց լինի քեզ վրայ, անշուշտ էշն էլ...

26 եր. «Եւ յանկարծ ինձ հետ էշը խրխնջեց
«Ու մեր առջևից մի ատէր փախեց.

36 եր. «Ու էշի կողքին ուժեղ զարկելով
Անցաւ ու գնաց...
Էշը վեր ընկաւ անքալ սկսեց.
. . . . . . . . . . . .
Մանաւանդ երբ որ էշը սրտարաց
Օգնող հայացքով նայում էր վրաս,
Նա չարչարւելով շարժեց գլուխը
Ու ինձ էլ հետն իր տակոյն արաւ։

Վայ, վայ, զարզանե՛ճ, կարամ՛ւլ. օգնեցէ՛ք, էշը ըմն անտառեղծ պ. Ա. Ջանեանին իր տակոյն արաւ...

Սակայն ո՛չ, կացէք, СТОЙ. թողէք որ ինքը հայ հասարակութիւնը վճռի. թէ արդեօք արժան է, որ պ. Ա. Ջանեանի պէս բանաստեղծները ազատւին էշի տակից և նորից հրապարակ գան, նրա զանէին տանելու իրենց իշային պօէմներով, թէ աւելի լաւ է ընդ միշտ թողնել նրանց այդ դրութեան մէջ, նրանցից ազատւելու համար։

Դ. Ն. Լ.

14, 16, 17, 18, 19, 20 и 21 февраля.

Цѣны нѣкоторымъ товарамъ ниже номинальной ихъ стоимости до 75% съ рубля

# П. С. ДОРОЖНОВЪ

Сололкская ул., д. Гургенова. Телефонъ № 583

Цѣны нѣкоторымъ товарамъ ниже номинальной ихъ стоимости до 75% съ рубля.

Увѣдомляя, что при настоящемъ стѣсненномъ положенiи рынка фирма случайно очень выгодно прiобрѣла нѣсколько большихъ партiй товара, а вмѣстѣ съ тѣмъ за окончанiемъ сезона: на всѣ товары, случайно купленые и оставшiеся отъ прошлыхъ сезоновъ, назначена

# ГРОМАДНАЯ ДЕШЕВАЯ ПРОДАЖА.

Только 7 дней 14, 16, 17, 18, 19, 20 и 21 февраля.

Товара на громадную продажу поступило по всѣмъ девяти специальнымъ отдѣламъ свыше чѣмъ на

## 300,000 РУБЛЕЙ.

*которые будутъ продаваться въ продолженiе вышеуказанныхъ дней по неслыхан. до сихъ поръ дешев. цѣнамъ*

ОБРАЩАЕМЪ ОСОБОЕ ВНИМАНIЕ НА НЕСЛЫХАННУЮ ДО СИХЪ ПОРЪ ДЕШЕВИЗНУ ЦѢНЪ, ВСЕ ПОРАЗИТЕЛЬНО ДЕШЕВО.

Полотно французское цвѣтное отъ 10½ коп. арш.

Муслинъ и фуляръ цвѣт. отъ 10½ к. арш.

Сарпинка саратовская. отъ 9 к. арш.

Туаль-Санъ и Грос-Туаль кост. отъ 13 коп. арш.

Шерст. мат. куп. на платье отъ 3 р. 75 коп. за куп.

Фуляръ шелков., сарпинс. отъ 29 к. арш.

Трико для пол мужск. кост. отъ 6 р. 75 коп. за куп.

Фланель шерстяная хорош. кач. отъ 65 коп. арш.

Мадеполамъ очень шир. качества отъ 16 коп. арш.

Холстъ полотенечный суров. круч. отъ 17 коп. арш.

Платки носовые цвѣт. шелк. батиста за ¼ д. 28 коп.

Сорочки дамскiя съ отдѣлками отъ 80 коп. шт.

Панталоны изъ кручен. кембрика отъ 75 коп. шт.

Сорочки мужскiя изъ мадепол. высш. кач. 95 коп. шт.

Кальсоны изъ специальной ткани отъ 90 коп. шт.

Чулки дамск. загр. двойной подошвы вмѣсто 7 р. 80 коп.—4 р. 80 к. дюж.

Носки муж. двойн. пятки, отъ 2 р. 20 коп. дюж.

**Свыше 50,000 штукъ остатковъ всевозможныхъ товаровъ**

Торговля въ дни дешевой продажи будетъ производиться отъ 9 час. утра до 2½ час. дня и отъ 4 час. дня до 6½ час. вечера.



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենայնը Աշխարհում



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարկութեան, շքեղ ֆասօնների և ամենաշատ գործածուող նիւթերից:

ԱՆԳԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻՇԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

ПРОВОДНИКЪ РИГА

1888

---

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ,**

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:

УМЫВАЛЬНИКОВЪ: англійскихъ и московскихъ.

КРАВАТЕЙ: англійскихъ, подносныхъ и мѣстной работы.

ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази

МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рococo" модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.

СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спеціально для столовыхъ.

ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, доморныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

---

ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ
ЖИВОПИСЦЕВА ВЪ Г. ОРЛѢ.

ԾԱՂԻԿԻ ՀԱՄԱՐ: Պէտքիսի սրուակը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.: Մի բուրլուց պակաս—չէ վաճառւում: Ճանապարհածախսի համար—30 կոպ.: Երկու բուրլուց աւելի ուղարկին ՀԱՄԱԳՐԵՑՈՒՄՆ ԶԵՂՋ մինչև 20 տոկոս. Հասցէն՝ Օրեօլ քաղաք, Ծաղկի Հորթուկ Ժիվօպիսցեւ.



«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի

Կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թւի արժէ 5 ր.

1907 թւի » » » 7 ր.

1908 թւի » » » 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով:

---

ПЕРВАЯ

художественная хромо литографія

# С. БЫХОВА

*Тифлисъ, Головинскій просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стиляхъ.
Также всевозможные ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.

ПО САМЫМЪ УМѢРЕНЫМЪ ЦѢНАМЪ

**Работы исполняются лучшими европейскими мастерами**




ԲԱՐՁՐ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԺՇՏ. ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ.

ԷԺԱՆԱԳԻՆ

Երկ Երեսանի

ԶՈՆՈՖՈՆԻ

պլաստինկաններ.

Իւրաքանչիւր պլաստինկայի վրայ

ԵՐԿՈՒ ՊԻԷՍ

Փոքր երկերեսանի պլաստինկաներ . . 75 կոպ.

«ԳՐԱՆԴ» երկերեսանի պլաստինկաները . . 1 ր. 50 կոպ.

ԿԱՏԱԼՈԳՆԵՐԸ

ՁՐԻ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Վաճառւում է Կովկասեան երկերեսանի պլաստինկաներ:

Ա Կ Ց Ի Օ Ն Է Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ.

Թիֆլիզ՝ Գոլովինսկի **ԳՐԱՄՄԱՖՈՆ** պրոսպ. № 9

Մոսկւա՝ Տւերսկայեա 26, Պետերբուրգ՝ Մորսկայեա 49, Խարկով՝ Նիկոլաեսկիյ հրապարակ 18, Րոստով-Դոնի՝ Նիկոլաեսկիյ պրոսպ. և Մեծ Սադովայեա փողոցների անկիւն, Քաղաքային տանը, Օմսկ՝ Լիւբինսկիյ պրոսպ. ..ա. Գտնւում այլև բոլոր ԳՐԱՄՄԱՖՕՆԱՅԻՆ և երաժշտ. գործիքների մագազ.


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

ՎԱՂԱՀԱՍ ԳԱՐՈՒՆ

„Simplicissimus".



Տասնեհինգ ամեայ աղջիկը.—Ա՜խ, վերջին տարիներս այնքան սիրալիր ձմեռ որ չեմ կարողանում գտնել և փորձել ինչպէս այդ լինում էր առաջ՞

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ

Ն. „Lustige Blätter".



Հարսանեկան նոտար.—Բայց պարոն փեսացու, դա ինչ վրդովեցուցիչ զգեստ ունէք դուք հագած և այդպէս անպատշաճ։
Փեսացու.—Սա իմ հանդիսաւորական հագուստն է, պարոն նոտար, այս շորով ես միշտ երևում եմ ներկայացմանց ժամանակ—ֆարսերում. և այս ձևի շորը աւելի դուր է գալիս իմ հարսնացուին։

Հ Ա Յ Խ Մ Բ Ա Գ Ր Ա Տ Ն Ե Ր Ը



Ա՜յ թէ ինչպէս հայ խմբագրատներում կեղտոտ լաթեր են լւանում անձնական հողի վրայ, իսկ խմբագրական գործերով երբէք չեն պարապում. դրա արդիւնքն է՝ հայ մամուլի ներկայ անկեալ վիճակը։

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Հոկտեմբերական Գուչկովը (III Պ. Դ. անդամ).



Ի՛. փ. ի՛ փ. ա՜յ, ինչ որ պարլամենտ, երանի թուրքիացիներին, որ մեզանից շնորհով մարդիկ ունին.

## ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ




Սահմանված տրամվայի դիրեկտորից ձրի տոմսակներ չքավոր ծառայողների համար, բաժանում է այն՝ նրանց,
որոնք առանց այն էլ և՛ փող ունին և՛ ստանում են կառքածախս.